

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի Գ Ի Դ Դ Դ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՓԱՂԱԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՊՐԱԳՐԱՍՏԱՆԸ:
Օտարաբաղադրացիները պէտք է զինման հետեւաւ հասցէով՝ Тифлисть. Редакция «Мшакъ»: Խալ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ձը չեղվեց սկզբունքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արհեստագործների հիւանդանոց և ապաստանարան. Մատենադարան. Նամակ Օգոստոսից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հաւելչատան:

ՁԸ ՇԵՂՎԵՆՔ ՍԿՁԻՈՒՆՔԻՑ

Ձեր կարող թագցնել մեր խորին վիշտը և չը խոտովանել, որ մի խումբ ավանտիւրիստների ցանկութիւնը՝ ատելութիւն սերմանել պետութեան մէջ ապրող զանազան ազգութիւնների մէջ.—սկսում է պըտուլներ տալ...

Չորս պատերի մէջ, և լրագրական ավանտիւրիստների զիլում ծաղած մտքերը՝ պղտորել այս և այն ազգի յարաբերութիւնները, կասկածի տակ դնել այս և այն համայնքի զգացմունքները, տարաբաղադրար, անձեցին, մուտք գործեցին լրագրական սիւնաքանդի մէջ, իսկ այնտեղից էլ այսօր

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Բ Է Շ Ս Տ Ա Ն

(Խոստա-հաբէշական պատերազմի առիթով)

III

Ընտանեկան կեանք և կազմակերպութիւն այն ձևով որ ունեն միւս քրիստոնեայ ազգերը, չը կայ հաբէշների մէջ: Ամուսնութիւնը հաբէշների մէջ չէ համարվում իբրև եկեղեցու խորհուրդ, այլ պարզապէս մի քաղաքացիական դաշն, և այդ պատճառով բաղձնալուծութիւնը տիրապետող սովորութիւն է: Մեծամեծները մինչև 300 կին են ունենում, իսկ մնացածները այնքան, որքան ներում է իրանց նիւթական կարողութիւնը: Ամուսնութեան և ապահարդանի վերաբերմամբ նայն օրէնքն է տիրում, ինչ որ մասնատակաւնների մէջ.—դաշնագրի մէջ որոշվում է այն գուժարը, որ տղամարդը պէտք է տալ, երբ կամենայ արձակել կնոջը և ուզած ժամանակ վճարելով այդ գումարը, արձակում է կնոջ: Օրինաւոր կնոջ հետ միասին հաբէշ պահում է և հարձեր, որոնք մեծ մասամբ տան աղախիներն են լինում:

Ձը նայելով այդ հաբէշական զիւրութիւններին, պոռնկութիւնը Հաբէշաստանում սարսափելի տարածված է: Դրա պատճառը համարում են այն հանգամանքը, որ հաբէշները, մասնաւորապէս հաբէշները, առհասարակ սաստիկ տափոտ և վաւաչոտ են և երկրորդ, տղամարդը մինչև 30

սպառնում են մուտք գործել կեանքի մէջ, և քանզի այն բոլորը, ինչ որ շինված է տարիների ընթացքում, ամենալաւ մտածողների և զործողների շնորհիւ...

Կա է՝ առաջադիմութիւնը: Կա է՝ միթէ առաջադիմութիւնը, որ փոխանակ վարժեցնելու զանազան ազգութեան և կրօնի պատկանող ամբողջ զուրազալ իր կիսալայրենի բնագոյնների միջից, և սիրել այն բոլորը, ինչ որ լաւ է, ինչ որ բարձր է, ինչ որ մարդկային է, աշխատում են աւելի էլ զրգուել ամբողջ մութ կրքերը՝ հրաւիրելով նրան առել այն, ինչ որ պատկանում է մի ազգութեան, հայաձեւ այն, ինչ որ կրում է որ և է համայնքի անունը, և այդ բոլորն էլ իբր թէ յա՛նուն պետութեան, յանուն պետական բարձր շահերի:

Միթէ, ճշմարիտ, այնքան թուլացել, նսեմացել, քայքայվել է այն լուսաւոր, վերակենդանացող ոյժը, որ երկար տարիներ ընթացքում կրթեց, դաստիարակեց պետութեան մէջ մտնող բոլոր ազգութիւններին ինտելիգենցիան, տարածելով բոլորի մէջ համբարաշխութեան դաշնապաշտ, միթէ, կրկնում ենք, այնքան թուլացել, քայքայվել է այդ լուսաւոր ոյժը, որ մի խումբ, նոյն իսկ մի քանի լրագրական ավանտիւրիստներ, մի քանի բաղադրութիւններ կարողանում են պղտորել մտքերը և հող դանել իրանց քարոզած միասնակար մտքերի համար:

Թող ինչ ուզում են քարոզեն «ատելութեան հերոսները»,—մենք հաւատում ենք աւելի բարձր զգացմունքներին՝ մարդկային սիրող զգացմունքներին՝ յաղթանակին: Մենք հաւատում ենք, որ այս անցողական շրջանը ոչինչ զգալի հետք չի թողնել, և այդ «հերոսների» աղաղակը շուտով այլ ևս լսելի չի լինի: Այդ խորին հաւատով ներշնչված, մենք մեր պարտքն ենք համարում յիշեցնելու հայ ժողովրդին՝ չը վերաբերվել, չը յուսահատվել այն անարդար, անտեղի և զրպարտիչ յարձակումներից, որ վարձկան գրիչները թափում են նրա գլխին, և շարունակել առաջ գնալ, իբրև պետութեան:

տարեկան չը դառնայ, չէ կարող յայտնի կերպով ամուսնանալ, այն հիման վրա, որ ս. Գրքի մէջ ասված է, թէ Ագամը 30 տարեկան հասակի մէջ ձանաչեց Եւային: Եւ որովհետև արդէն 15 տարեկան հասակում սեռական ցանկութիւնները զարգացած են լինում, ուստի և ստիպված են լինում գիմել պոռնկութեան: Հաբէշի համար, լինի նա չափահաս, թէ տղայ, մեծ ամօթ է համարվում գիւրը միայնակ քնելը: Երտեղ էլ լինի, նա պէտք է գիւրը իրան ընկեր-կին ունենայ. այդ պատճառով իշխանները և մեծամեծները քանի գիւր որ ունեն, կամ քանի տեղ որ ստիպված են չըլել, այնտեղ մէկ-մէկ կին ունեն: Միջակ կարողութեան տէր մարդիկ, մի տեղ ճանապարհորդելիս, տանում են իրանց հետ կամ իրանց կնոջ կամ մի սպասուհի, ճանապարհի պաշարը չալակած, իսկ աղքատ դատակարգի մարդիկ, ինչ գիւր էլ որ գնան, այնտեղ վարձում են մի հասարակաց կին կամ իջնանում են մի այնպիսի տան մէջ, որտեղ այդ չունեցող մի կին կայ և այդ կնոջ՝ հիւրին առաջարկելով, այնտեղ սովորութիւն է: Ազգակցութեան կամ հիւրահամարութեան կապերը շատ թույլ են. մի մօրից, բայց զանազան հօրից եղած քոյրերը կարող են միաժամանակ մի մարդու կին լինել:

Ամուսնական կեանքի այդ տեսակ պայմանների հետեւեցը լինում է այն, որ ապօրինի դաւանների թիւը չափազանց շատ է. եթէ դաւանը կարողացաւ հաստատել վիշտների ցուցմունքով և մօր երգմամբ իր ում որդի լինելը, այն ժամանակ հայրը պարտաւոր է որդեգրել նրան և ընդունել իբրև օրինաւոր զաւակ: Այդ

թեան անձնուէրը քաղաքացի, իբրև խաղաղ, կուլտուրական ոյժ:

Կան բարձր, յաւիտենական սկզբունքներ, որոնցից չը պէտք է շեղվել, որոնք չը պէտք է զոհ բերվեն անցողական, նոյն իսկ շատ սպառնական կերպարանք ընդունող դէպքերին և հոսանքներին:—Կա համբարաշխութեան, մարդկային փոխադարձ սիրող սկզբունքն է: Եւ մեր պարտքն է, ինչպէս մի կուլտուրական ազգի՝ հաւատարիմ մնալ այդ սկզբունքին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՀԵՍՏԱՆՈՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԳԻՆՈՅ ԵՒ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ

Լրագիրները արդէն հաղորդեցին, որ հարկերի վերահսկող Կորգանովը նշանակված է նախագահական իշխանութեան կողմից՝ Թիֆլիսի արհեստագործների վարչութեան մէջ տեղի ունեցող զեղծումների առաջն առնելու և արհեստագործների աւագների ընտրութիւնները ղեկավարելու համար: Նա իր անաչառութեամբ և բռնած դիրքով՝ կարճ ժամանակամիջոցում մեծ հիշխանութիւն ձեռք բերեց արհեստագործների մէջ, և լաւ ուսումնասիրելով նրանց գրութիւնը՝ ձեռնարկեց մի շատ օգտաւէտ և բարի գործի, այն է՝ Թիֆլիսում հիմնել արհեստագործների համար Հիւանդանոց և Ապաստանարան: Արհեստագործները մեծ համակութեամբ վերաբերվեցին դէպի Կորգանովի այդ գովելի նախաձեռնութիւնը և կարճ ժամանակամիջոցում իրանց մէջ ժողովեցին 3.000 ռուբլի փող, մի և նոյն ժամանակ խոտանալով հիւանդանոցի և ապաստարանի շինութեան աշխատանքները ձրի կատարել: Մեծ եռանդով և ոգեբուրութեամբ նուիրված լինելով այդ գործին, Կորգանով կարողացաւ ապաստարանի և հիւանդանոցի շինութեան համար հարկաւոր հողը ձեռք բերել ձրի, որը գտնվում է խօջիվանքի գերեզմանատան մօտ (միանգամայն նապատակայարմար տեղ) և ունի 300 սամէրից աւելի տարածութիւն: Այդ հողը նուիրեց իշխան Բէշտութեան:

պատճառով ամեն մի կին, երբ դիչերը մէկի հետ ունենում է յարաբերութիւն, առաւօտեան շուտ վաղում և պատմում է զրացնելին և ծանօթ մարդկանց, որպէս զի դաւակ ունեցած ժամանակ վկայութիւն տան: Տարակոյս չը կայ, որ ամուսնական այդպիսի անմաքուր, չափազանց յարաբերութիւնների մի ուրիշ հետեւանքն էլ վնասեցական հիւանդութիւններն են, որ սաստիկ տարածված են հաբէշների մէջ:

Մի ուրիշ ախտ, որը նոյնպէս սաստիկ տարածված է հաբէշների մէջ—որդախտն է, որ գոյանում է, ինչպէս ենթադրում են, կովի հում միս ուտելուց և օդից: Խրաքանչիւր հաբէշ ամեն երկու ամիս մի անգամ բռնվում է այդ ցավով—ստամոքսի մէջ գոյանում են որդեր, որոնց դէմ եթէ դեղ չը գործածվի, այնքան չաւանդում են, որ սկսում են նոյն իսկ բերանից թափվել: Հաբէշաստանի բնութիւնը, գոյացնելով այդ որդը, արտադրել է և նրա դէմ դեղը, այն է ք օ ս օ ատված զեղնազոյն ծաղիկը, որը չորացնելով, փոշիացնելով ու լուծելով պաղ ջրի մէջ՝ խմում են առաւօտները. նա սաստիկ լուծողական դեղ է և շուտով մաքրում է ստամոքսը որդերից, թէ և վերջնականապէս մաքր չէ ազատվում նրանից: Երբեմն այդ որդերը մահվան պատճառ էլ են լինում:

Մեռածները վերաբերմամբ հաբէշները հետեւել սովորութիւնն ունեն: Երբ մէկը մեռնում է, նրա տան կտուրից մէկը բարձր ձայնով հաղորդում է ամբողջ գիւղին մահուան լուրը: Խալոյն ննջեցնելի մարմինը լուսնում են, կտաւով մաքրելով, զարդալով փաթկում և փակվում մէկ

Թէ ինչքան համակրելի և օգտաւէտ է այդ ձեռնարկութիւնը, շատ հասկանալի է: Արհեստագործները իրանց օրվայ եկամուտով հաղիւ ապրելով՝ հիւանդացած ժամանակ գտնվում են ամենամանաւելի զրուկեան մէջ. զրկվելով օրվայ վարձից՝ ոչ միջոց են ունենում բժշկի դիմել, ոչ դեղ առնել և ոչ էլ կարողանում են աջողեցնել ձրիաբար քաղաքային հիւանդանոցը մտնելու, որտեղ—փակադրի մէջ պէտք է նկատեցը.—չը մտնել աւելի լաւ է... Նոյնպէս շատ դժուար է աջողվում քաղաքային բուժարանից ձրիաբար օգտվելու: Այդպիսի անտանելի հանգամանքում՝ անհարացած հիւանդը դիմում է տնային, շատ անգամ միասնակ միջոցների, որոնք նրան տանում են շուտով գերեզման իսկ այն արհեստագործները, որոնք ծերանում են, կամ որ և է դժբաղդ պատճառով անընդունակ են դառնում աշխատելու, աւելի վատթար դրութեան մէջ են գտնվում.—քաղաքային աղքատանոցը նրանցից ոչ մէկին չէ աջողվում մտնել, ոչ մի տեղից ապրելու միջոց չեն գտնում և ընկնում են ցրտի և քաղցի ճանկերի մէջ: Նրանցից շատերը դիմում են մուրացկանութեան, իսկ շատերը աւելի լաւ են համարում մեռնել քաղցած, քան թէ ձեռք առնել մուրացկանի ամօթաբեր պարկը.—և մեռնում են անօգնական, մեռնում են ցրտից և քաղցից... և շատերը մեռնելուց յետոյ էլ ամբողջ չարաթ մնում են առանց թաղվելու... Սա փաստ է:

Ուրեմն ինքն իրան հասկանալի է, թէ մի այնպիսի ձեռնարկութիւն, ինչպիսին է արհեստագործների Հիւանդանոց և Ապաստանարանը հիմնելը, ինչքան օգտաւէտ և անհրաժեշտ է: Եւ այդ գործը կարող է հեշտութեամբ աջողվել և ամուր հիմքերի վրա դնվել.—եթէ միայն ձեռնարկողը եռանդը չը պակսի.—զխաւարապէս այն պատճառով, որ արհեստագործները արդէն ունեն իրանց կազմակերպած վարչութիւնը, որը կարող է վարել Հիւանդանոցի և Ապաստանարանի գործերն էլ, և այդ դէպքում Հիւանդանոցը ազատ կը լինի մի որոշ ծախսից: Արհեստագործները կազմում են առանձին-առանձին համայնքներ, ունեն մինչև անգամ իրանց առան-

և կաշուէ փոկերով պինդ կապկպում այն մահաճախարի, որի վրա հիւանդ ժամանակ պատկած էր. յետոյ տանում են եկեղեցի և գերեզմանատուն: Եթէ մեռնողը եկեղեցական է կամ երեւելի անձ, յուզարկաւորութեան միջոցին խմբուկ են խփում և այդ կին, զգլիւնների հետ երգելով պարում են: Հրէաների նման քառասուն օր սուգ են բռնում և այդ միջոցին գլուխները կարագ իւղով չեն օծում:

Մկրտութեան խորհուրդը թէ և ընդունում են հաբէշները, բայց եկեղեցիներում յատուկ աւազան չունեն և որտեղ պատահի, այնտեղ էլ կատարում են մկրտութիւնը: Տղաներին մկրտում են 40 օրական, իսկ աղջիկներին 8-օրական եղած ժամանակ: Ժողովուրդը տարին մի քանի անգամ, ամենաբարձր երեք անգամ, դարձեալ մկրտութիւն է ընդունում գերեզմանատան մէջ և այդ անգամ է, ինչպէս իրանք են ասում, մկրտութեան յիշատակը չը մոռանալու համար: Մկրտվելով իբրև քրիստոնեայ, հաբէշները իրանց երեխաներին թրկատում են մահաճախարանների և հրէաների նման, և թրկատութիւնը կատարում են ծնվելուց 8 օր յետոյ, իբրև օրինակ քրիստոսի թրկատութեան:

Եկեղեցու միւս խորհուրդներից հաբէշները ընդունում են և խաւովեամբ պահպանում են հաղորդութեան խորհուրդը, բայց ամեն մարդու հաղորդութիւն չեն տալիս, այլ հաղորդվելու իրաւունք ունեն միայն կ օր ավելի երբ, այսինքն այն հաբէշները, որոնք ուսում և դպել են կաւրում սուրբ հաղորդութեան վրա երգվելով, որ կապրեն միայն մի օրինաւոր կնոջ հետ, մինչև

նա իմ մի բնական նկատողութիւնը ընդունէր «վերաբերման» տեղ և «պահանջներ ներդրու- թիւն», այն ժամանակ նախագահի այդ քայլը եւ կընդունէի անտեղի և անարդար և բնականաբար բաւարարութիւն չէի տայ: Մի նախագահ ժողո- վականին ասի «լուսնեք» և զբաղուի չը բաւակա- նանալով՝ «պահանջներ ներդրուիւն» ու նա էլ վերկենայ ներդրութիւն խնդրէ, —այդպէս վար- վել կարող են միայն «Արձագանքի» ընթերցու- րի նման պատասխանելը...

Այդ պարունիւն վերջնականապէս աղտակելու համար դառնում եմ ժողովի նախագահ պ. Արա- խանեանին և խնդրում «այս» կամ «նշ» պա- տասխան տալ հետեւեալ երկու հարցին. 1) ձեռք է, որ դուք ասել էք ինձ «լուսնեք», թէ ոչ: 2) ձեռք է, որ դուք պահանջ եւ եք ինձանից ներդրութիւն, ասել էք «ներդրութիւն խնդրե- ցեք», թէ ոչ: Իր այդ պատասխանով պ. Արախա- նեան մի անգամ ևս կը հաստատէ, թէ «Արձա- գանքի» խմբագրութիւնը ինչ կարգի բարոյական աղանդակութիւններէ, մտքի ինչ տեսակ ֆալ- սիֆիկատորներէ է բաղկացած...

Պետրոս Մեքումեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Շուշի, մարտի 23-ին

Բարեգործական ընկերութեան Շուշու Ֆիլի- վարչութիւնը յարգանքով խնդրում է տպագրել հետեւեալ «Մշակի» մատակց համարներէ մե- կուս:

Վարչութիւնը քաղցր պարտականութիւն է հա- մարում յայտնել իր հնորակալութիւնը Մա- թէոս Մ. Յովսէփեանին, որը նուիրել է ընկե- րութեան իր հանգուցեալ հոր յիշատակին՝ հա- րիւր յիսուն թուրքի, և հետեւեալ պարաներին, որոնք նուիրել են ընկերութեան գրադարան- ընթերցարանին 1896 թվականի հետեւեալ պար- քերական հրատարակութիւններ. Արաքի կրտսի- յիկեան «Տարագը» և «Աղբիւր», կուսանդին կրա- սիլիկեան «Կառնի», Խաճակ Թաղէոսեան «Մշակ» և «Արձագանք», Գասպ. Տէր-Մարգա- րեան «Մշակ», Մնացական Խոնունց՝ «Մուրճ», և Պետրոս Զաքարեան՝ «Շախիդ»:

Փոխ-նախագահ՝ Մ. Լաւաղարեանց, գործա- վար վարչութեան՝ Մ. Տէր-Մարգարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՌՆԵՐ

Կովկասեան կառավարչապետի իրաւասութեան վերաբերութեամբ «Новое Время» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալը. «Черноморскія Вѣст.» լրագրի ստացած տեղեկութիւնների համա- ձայն՝ Կովկասի կառավարչապետ Շերէմէտէվի վերադարձը Ռիֆիւս յետաձգված է, որովհետեւ ասիական երկրորդ կէտում պետական խորհրդի մէջ պէտք է քննարկել շատ կարեւոր հարցեր Կով- կասեան երկրի վերաբերեալ: Ինչպէս լուրում է, վերջնականապէս պէտք է որոշվի Կովկասեան կառավարչապետի իրաւունքների ընդարձակելու խնդրը: Միւս կողմից վերջինների մէջ արդէն հա- մաձայնութիւն է կայացել այդ խնդրի մասին և միւս կողմից կոմիտէտը մշակել է Կովկասի կառավարչապետի նոր իրաւունքների ծրագրերը: Մինչև այժմ գործադրվող կանոնադրութեամբ, Կովկասի բաղադրական մասի կառավարչա- պետին ենթարկվում են ներքին գործերի մի- նիստրութեան Կովկասում գտնվող հաստատու- թիւնները, ինչպէս և զինուորական վարչութեան հաստատութիւնները, իրեն չըջանի զօրքի հրա- մանատարի. բայց նոր ծրագրով կառավարչա- պետի անմիջական իշխանութեան պէտք է են- թարկվեն ընդ որ մինիստրութիւնների հաստա- տութիւնները, բայց դատաւարական և կոնս- րուկտիւ հաստատութիւններից: Նոր կանոնադրու- թեան ծրագրով, կառավարչապետին պէտք է յատկացնեն այն իրաւունքները, որոնք յա- տկացված էին Կովկասի նախկին փոխարքաներին, միայն այն սահմանափակումով, որ դատաւար- նական և կոնսրուկտիւ հաստատութիւնները նը- րան չեն ենթարկվի:

Մեզ հաղորդում են, որ երգչուհի Պապայեան եկել է Բազումի թիֆլիս և զինուորական ու- նի այստեղ տալ երկու կոնցերտ, առաջինը՝ իր օգտին, իսկ երկրորդը հայոց Բարեգործական ընկերութեան օգտին:

Վրաց ժողովրդական խորհուրդի ղեկավար Ե. Բաբաջանի ղեկավարութեամբ «la Սոցիալիստ» «Կա- ԿԱՅԵ» լրագրի հինգշաբթիվայ համարում խո- նելի ողբում է, որ մի հայ խել է Վիդուբէի վրաց եկեղեցու գետինը, իսկ հայոց կոնստա- րիան չէ ուզում վերադառնալ հայոց գերեզմանատան հողը նուիրել մի վրացի կնոջ: Վրացի գրողի ողբը ոչ թէ անարդարութեան դէմ է, այլ այն բանի դէմ, որ գործողներն են՝ մի հայ և հայոց կոնստալիստներ: Միայն խօսելու նման գրողը կարող է այդպէսով չնչին, մասնաւոր դէպքերի մէջ ազդու լինել, հայոց լինողի տեսնել, և մանր-մուսն դէպքերից ազգայնական հարցեր յարուցանել: Մեզ չէ զարմացնում վրա- ցի գրողի այդ օգին, մեզ միայն զարմացնում է, որ այդպէսով տղեր տեղ են գտնում «Կա- ԿԱՅԵ»-ի մէջ, որի այժմեան խմբագիր պ. Մի- լիտին, որքան մենք գիտենք, չէ պատկանում Սոցիալիստների բանակին:

Մարտի 15-ին, Յարսի-Սէյուն վախճանից այդ քաղաքի կոմիտէի նախագահ Զոհրաբի, որը 1877 թվին, ուսման ժամանակ պատերազմի ժա- մանակ, մեծ հոգով ստացաւ մեր երկրում՝ Բալա- դէտի բերդի պաշտպանութեամբ: Ինչպէս յայտ- նի է, Զոհրաբի պաշտպանութեամբ էր իր փոքրիկ զո- րագնաով Բալադէտի բերդի մէջ, որը պաշարված էր 25,000 հոգուց բաղկացած բերդ և թիւրք զօրքերով: Ամբողջ 23 օր Զոհրաբի և իր զուգը հերոսաբար ընդդէմացան, մինչև որ գերեզմա- Տէր-Ղուկասով կարողացաւ օգնութեան հասնել և ազատել անուստափելի կարտիք թէ բերդը և թէ պաշարվածներին: Ֆեօդոր Զոհրաբի ծնվել է 1828 թվին. նա իր ուսումը ստացել է Ռիֆիւսի գիմնազիայում և 1847 թվին մտել է զինուորա- կան ծառայութեան մէջ, և այդ ծառայութեան մեծ մասը անց է կացրել Կովկասում, մաս- նակեցով կովկասեան բոլոր պատերազմնե- րին: 1854 թվին, Քիւրիւկ-Վարայի մօտ եղած կուր ժամանակ, նա մի քանի վերքեր ստացաւ, բայց այդ հանգամանքը արեւել չհղաւ նրան շա- րունակելու իր ծառայութեանը:

Բարեգործական ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. Խոր- հուրը ստանալով Զատիկի տօների առիթով չքաւորներին և տառապեալներին բաժանելու համար զբաղման նուէրներ—1) պ. պ. Շիւ- ղերեանց—20 Կ., 2) Կ. Նովեանեանց—5 Կ., 3) Գնդապետ Ստեփանեանց—2 Կ., 4) Պե- րոս Ալիքեանց—5 Կ., 5) Պ. Ղուկասեանց— 50 Կ., 6) Զ. Գորգեզեանց—5 Կ., 7) ՆՆ— 2 Կ., 8) Ա. Բաբախանեանց—1 Կ., 9) Ն. Տ. Ղ.—5 Կ., 10) Բ. Նաւասարդեանց—3 Կ., 11) ՆՆ—4 Կ., 12) ՆՆ 5 Կ., 13) Ս. Լիսիցեանց— 1 Կ., 14) Զ.—2 Կ., 15) Մ. Սուլամանեանց— 10 Կ., ընդամենը 100 Կ., 20 Կ.—յայտնում է նախորդական իր հնորակալութիւնը, կցե- լով, որ նուէրները բաժանված են չքաւորնե- րին:

Մեր հնորակալ նկարիչ Բալինջաղեան, ինչպէս հաղորդում է «Нов. Обозр.» լրագրի, ասիական սկզբին բանալու է Ռիֆիւսում իր պատկերների ցուցահանդէս, որտեղ կը լինեն մօտ 20 նոր նկարներ:

Պետերբուրգում բացվել է աշխատանքի տուն՝ կրթված կանանց համար: Աշխատանքը պէտք է սկսվի առաւօտեան ժամը 10-ին և վեր- ջնայ երեկոյան ժամը 6-ին: Պարագմունքը պէտք է լինի ձեռքի արհեստ, զբաղութիւն, խաղալիքներ չինել և այլն: Աշխատողները կը ճաշեն էֆանազիին ճաշարանում: Վարչութիւնը պէտք է հոգաւ, որ աշխատողները կարողանան չուտով պաշտօններ գտնել:

Խաղաղական տուն գնդերը պէտք է մի- յայտնի գործարարներ գործ դնեն: Նորերս Սեւ- սայի նահանգական զատարանում քննվեց այդ- պիսի տոմսերի կեղծելու մի մեծ գործ: Տոմ- սերը պատրաստվում էին արտասահմանում, օ- րինակ Պարիզում, Տրիեստում, Պրագայում, Գեր- տում և յետոյ բերվում Ռուսաստան: Այդ ար- հեստը գործադրվում է եղել 1868 թվին Ալյա- և միայն այժմ է յայտնի դարձել կառավարու- թեան:

ԵԿԱՏԵՐԻՆՍԿԱՅԻՅ մեզ գրում են. «Այսօր, մարտի 20-ին, առաւօտեան ժամը 10-ին, քա- ղաքի հիւսիսային կողմում սկսվեց հրդեհ: Սա- տիկ քամի էր և այդ պատճառով հրդեհը բո- նեց մեծ տարածութիւն: Այրվեցին մօտ 150 տուն: Վնասվողները քաղաքի ամենաաղքատ բնակիչներն են:

Փոթի քաղաքը նորից ենթարկվել է հեղեղի աւերումներին: Ինչպէս հաղորդում են տեղա- կան լրագրիւններ, քաղաքի մի քանի փողոցներ մնացել են բոլորովին ջրի տակ և բնակիչները տեղափոխվում են աւելի ապահով տեղ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլսից մեզ գրում են մարտի 15-ից, «Թիւրք թերթերում մէջ կառավարութիւնը հրատարա- կեց, որ վախճանու հայ օգնականները պատրաս- տուած են ճամբայ ելլելու. ասկէց զատ յայտա- բարվեց թէ նահանգային իշխանութիւնները հրա- հանգ ստացած են հայերին ուստիական գրել մա- յիս 13-էն սկսած:

Կ. Պոլսից հեռագրում են մարտի 15/27-ից անգլիական լրագրիւններ. «Շատ ջանքեր գործ- դրվեցին համոզելու Միս Բարտընին յետ կանգ- նելու իր դիտարարութիւնից: Միւս կողմից իր խո- հուրը որոշեց, որ կարելի է թոյլ տալ բաժանել նպաստ միայն այն ցուցակներով, որ կառավար- կի թիւրքաց հանգանակիչ մասնաժողովը, և նը- պաստները բաժանումը պէտք է կատարվի տե- դական թիւրք մասնաժողովներին միջոցով: Բացի դրանից Միս Բարտընի գործակալները կարող են գնալ միայն քաղաքներ, իսկ զիւղերում մուկ- տարները կը պատրաստեն ցուցակներ, և կա- ղարկեն չքաւորներին քաղաք նպաստ ստանալու համար այդ ցուցակի համաձայն: Այդ մտքով մի- իրադէ պէտք է հրատարակվի:

«Մարաշից եկած հեռագրիւնները յայտնում են, որ աիֆ և փոքրաթիւ հիւանդութիւնները մեծ ջարդ են գործում: Միս Բարտընը կամենում է վարձել Ռէյրութում վեց բժիշկներ և երկու դե- դագործներ և ուղարկել Մարաշ:

Կ. Պոլսից հեռագրում են մարտի 13/25-ից. «Թիւրք թերթի իշխանութիւնը արգելած լինելով ա- մերիկական միսիոնարներին նպաստներ բաժա- նել չքաւորներին, սըր Ֆիլիպ Կերի մի տեսակ- ցութիւն ունեցաւ այդ առիթով Տէվֆիդ-փաշայի հետ:

«Դիւլամատիկան չըջանալուով այն կարծիքն է տիրապետում, որ Քիլիկիում հայերի և թիւրքե- րի մէջ պատահած նոր խռովութիւնները շատ լուրջ բնուորութիւն են ունեցել և աւելի սա- տիկ են եղել, քան ինչ որ հրատարակել է Բ. Գուրը: Քաղաքը պաշարված է զօրքերով և ոչ ոքի չէ թողարկում ոչ ներս մտնել, ոչ դուրս գալ:

«Daily News» լրագրից հաղորդում է, որ իբրեւ պատասխան Գաղստօնի հրաւերին—փող հանգա- նակելու հայերի օգտին, Ստոկհոլմից, մի խումբ համակրողներից ստացվել է 100 լիւրա, «The Christian» լրագրի ընթերցողներից—88 լիւրա, Ռէյնի բարեկամներից—100 լիւրա, Միս Հէյնի Գաղստօնից—10 լիւրա, մի եպիսկոպոսից—10 լիւրա և բազմաթիւ փոքր նուէրներ:

Հայկական ֆոնդը մինչև այսօր յանձնել է սըր Ֆիլիպ Կերիին 34,000 լիւրա՝ տուտապեալ հայե- րին բաժանելու համար:

Ռուսաց հեռագրական գործակալութիւնը հա- ղորդում է հետեւեալը մարտի 19-ից. «Անգլիա- կան պարլամենտում կերպով հաղորդեց, որ փոքր-Ասիայում գտնվող հիւպատոսների զեկու- ցութիւններին նայելով, պէտք է ենթադրել, որ մի- քանի նահանգներում նորից կը ծագեն անկար- դութիւններ:

Անգլիական համայնքների ժողովում Բայլէս մի առաջարկութիւն ներկայացրեց, որի մէջ ա- ված է, թէ կառավարութիւնը պէտք է միջոցներ ձեռք առնի կատարելու այն պարտաւորութիւն- ները, որ նա յանձն է առել թիւրքիայի վերա-

բերմամբ՝ կապած պայմանագրերի հիման վրա: Արտաքին գործերի մինիստրի օգնական Կերզօն, պատասխանելով Բայլէսին, յայտնեց թէ, որով- հետեւ թիւրքիան չը կատարեց Կիւրտի 1876 թվի դաշնագրով յանձն առած պարտաւորութիւն- ները ասիական վերադառնալու ընթացիկներ մտցնելու վերաբերմամբ, այդ պատճառով Անգ- լիան էլ ազատ է դաշնագրի այն յօդուածները կատարելուց, որոնց հիման վրա ինքն պարտա- տրվեց պաշտպանել վերոյիշեալ վերադառնալու անձնակազմին լինելը. բայց զբաղմով, այնու- ամենայնիւ, Անգլիան աղաւթած չէ թիւրքիայի հետ դաշնագրով յանձն առած ուրիշ պարտաւո- րութիւններից: Բայլէսի առաջարկութիւնը մերժ- վեց առանց բուհարկութեան:

Անգլիական աղաւթման կուսակցութեան միու- թիւնը Գաղէթֆէլի մէջ կայացած կոնգրեսում վստահութեան ըուէ տուեց լորդ Բոլդերին և կուսակցութեան այլ անդամներին, նոյնպէս և իր համակրութիւնը արտայայտեց հայերին և ցա- ակցութիւն յայտնեց, որ բրիտանական ղեկու- մատիւն այնպիսի մի ծանր հարուած կրեց թիւր- քիայում:

Բէյրութի գործակալութիւնը բացատրում է թիւրքաց գործերի Ձէյթունից չը հեռանալը նրանով, որ նրանք դեռ չեն վերջացրել այն պատերազմական գէներալ յետ վերջները, որ խել էին գէյթունցիները թիւրք զինուորներից: Մեծ պետութիւնների հիւպատոսները կը մնան Ձէյ- թունում, մինչև որ որոշված պայմանները կը կա- տարվեն:

Անգլիայում սկսում են լուրջ կերպով խօսել, որ Գաղստօնը պէտք է իր հեղինակաւոր ձայնը բարձրացնի ներկայ քաղաքական դէպքերի մա- սին: Նրա հակառակորդներից մէկը հրապարա- կապէս ասում է. «Յնչ չեմ ընդունում Գաղստօ- նի իրականական ծրագրերը, բայց միայն խնդրե- րում նրա ամենաբերկր պաշտօններից եմ»:

Նախկին մեծ վիզիր Սաիդ փաշան մտադիր է մշտապէս հաստատել իր բնակութիւնը Անգլիա- յում: Թիւրքաց իշխանութիւնները ամեն տեսակ արգելք են յարուցանում նրա դէմ և յորդորում են նրան թողնել անգլիական դեսպանի տունը, որտեղ նա ապահով պատուարան է գտել մինչև այժմ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ

Սալ մաստ, մարտի 10-ին

Անցեալ տարի քիւրդերը յարձակվեցին Քո- թուրի վրա, իսկ այժմ Շիկակ ցեղի զինուորնե- րից մէջը Հիւսէյնի աղան զանազան միջոցնե- րով ներկայում է վարդան զիւրի հայերին, որոնց քահանան՝ իր հօտը թողած, զինուորներ վերցրել, փախել է զիւղից և ապաստան գտել Փայաֆու- կում: Գիւղատէր պարսիկը յորդորում է հայերին զինադրել քիւրդերին, ասելով որ սպանված քիւր- դերի համար ես կը պատասխանեմ, իսկ եթէ հրադէն չունէք, ես ձեզ զենք գնելու համար ա- ռանց տոկոսի դրամ կը տամ, և դուք երեք տար- վայ ընթացքում քիւրդից կը վճարեք այդ պարտ- քը: Բայց վախկոտ հայերն այդ խնայեցի պայ- մանները չեն ընդունում:

Խոյի ճանապարհի վրա Նարիի մարդիկ մի հինգ օր սրանից առաջ՝ սպանել են Արապկեար անունով մի մահմետական, որ լրտեսի պաշտօն ունէր:


Քիւրդերի մի յայտնի խումբ բանակցութեան մէջ է մտել Սոմայի քիւրդերի հետ, առաջար- կելով զարմանք միահամուռ յարձակումներ գործել Սալմաստի վրա: Ան այժմ չորս հայ աղջիկ են բերել և Ռուսիայում պարսիկների վրա ծախել՝ հատը տալու թուրքիով. մի և նոյն ժամանակ քիւրդերն առաջարկել են այդ տեսակ աղանքից շատ բերել, եթէ մի քիչ աւել գին կը տան: Երկր քիւրդերից վրձ հանելու համար է, որ ան- ցեալ օրերը Քօթուր գաւառակի է Զաքալ գիւղի մի հայ երիտասարդ փախցնում է մի քիւրդ աղ- ջիկ: Աղջկայ աղգակները փախտապանների յետեւ են ընկնում, կոպում են, բայց չեն ա- ջողում վնասել նրանց: Այժմ պարսից ոստիկա- նութիւնը փնտռում է այդ երջանիկ զոյգին:

Մ.

— Սօֆիայից «Berliner Tageblatt» լրագրին հեռագրում են. «Կ. Պոլսից հաղորդում են, որ սուլթանը միջնորդից պապի առաջ՝ ներումն չհորհեւ պրինց ֆելդերմանցին եւ պապը պատասխանից հեռագրով, լի է կնքել լիցյի է տալիս լրագրին տօնի գաղտնի կախովի եկեղեցուն»։

«Կարմիր խաչի» անդալան վարչությունն ընդունել է հետևյալ որոշումը՝

Իւրաքանչիւր զինն է 20 կօպ.
Մարտի 1-է զրաւճառանոցներու և հրատա
սկի մօտ, Բարեառինկայա վ. № 8:
(№ 34) 3—3



2—2